



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2012թ. Տարբեր 7 - ի թիվ 5/6

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ՝ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԿԱՏԱՍԱՐ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասի գ) կետի պահանջով՝ ՀՀ վերահսկիչ պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

Հաստատել ՀՀ առողջապահության մախարարության «Առողջապահական ծրագրի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից իրականացվող՝ օտարերկրյա պետությունների և միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրված վարկային և դրամաշնորհային ծրագրերի նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

ՀՀ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ

Ի. ԶԱԽԱՐՅԱՆ



Հավելված

Հաստատվել է ՀՀ ՎՊ խորհրդի

2012թ. մարտի 7-ի թիվ 5/6 որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏ

ՀՀ առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից իրականացվող օտարերկրյա պետությունների և միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրված վարկային և դրամաշնորհային ծրագրերի նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Վերահսկողության հիմքը՝ ՀՀ վերահսկիչ պալատի 2011 թվականի գործունեության տարեկան ծրագրի 15/5 կետը, ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2011թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 26/3 որոշումը:

Վերահսկողության նպատակը՝ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Առողջապահական համակարգի արդիականացում», «Առողջապահական համակարգի արդիականացում» երկրորդ փուլ և «Թոչնագրիային հակազդելու» վարկային և դրամաշնորհային ծրագրերի միջոցների օգտագործման ուսումնասիրությունը:

Վերահսկողության առարկան՝ Ծրագրի միջոցների օգտագործմանն ուղղված գործարքներն ու ընթացակարգը:

Վերահսկողության օբյեկտները՝ «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ (այսուհետև ԾԻԳ) և ծրագրի իրականացմանն առնչվող այլ օբյեկտներ:

Վերահսկողությունն ընդգրկող ժամանակահատվածը՝ 2009թ. հունվարի 1-ից մինչև վերահսկողության իրականացման ժամկետի ավարտը:

Վերահսկողության ծավալը՝

Վերահսկողության նպատակներին հասնելու համար 01.01.2009-01.12.2011թթ. ժամանակահատվածում «Առողջապահական համակարգի արդիականացում» և «Թոչնագրիային հակազդելու» ծրագրերի կատարողականների վերլուծությունը, ծրագրերի թվով 4 բաղադրիչներով կատարված աշխատանքների ստուգումը:

դեկտեմբերի 16-ը:

Վերահսկողության մեթոդաբանությունը՝ Վերահսկողության իրականացման ընթացքում կիրառվել են դիտարկման, ստուգման և վերլուծության ձևը, ինչպես նաև համապատասխանության, ֆինանսական և արդյունավետության (կատարողական) վերահսկողության տեսակները:

Գիտարկման փուլում և ստուգման ընթացքում իրականացվել է կազմակերպությունից ստացված տեղեկատվության ուսումնասիրություն: Արդյունքում ապրանքների, խորհրդատվական ծառայությունների, ինչպես նաև շինարարական աշխատանքների ձեռք բերման մրցութային գործընթացը, ներկայացված կատարողական ակտերը և դրանց մասով փաստացի վճարումները համարվել են էական: Ստուգման ընթացքում կիրառվել են ընտրանքի, տարբեր տվյալների համադրման, համեմատման մեթոդներ, կատարվել է տարբեր փաստաթղթերի և տվյալների ուսումնասիրություն:

Վերահսկողության արդյունքները՝

Ծրագրերի իրականացման նպատակով ՀՀ կառավարության և Համաշխարհային Բանկի միջև կնքվել են «Առողջապահական համակարգի արդիականացում» թիվ 3920, «Առողջապահական համակարգի արդիականացում» երկրորդ թիվ 4267, «Թոշնագրիպին հակազդելու» թիվ 4178-AM վարկային և թիվ TF 058076 և TF 056629 դրամաշնորհային ծրագրերի Համաձայնագրերը:

I. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Առողջապահական համակարգի արդիականացման ծրագիր

Ծրագրի առաջին փուլի նպատակներն էին զարգացնել ընտանեկան բժշկության վրա հիմնված առողջության առաջնային պահպանման օղակը՝ մասնագետների կրթման և վերապատրաստման գործընթացի իրականացման, ինչպես նաև առողջության առաջնային պահպանության ենթակառուցվածքների բարելավման ճանապարհով, աջակցել ընտրված հիվանդանոցային ցանցերի արդիականացման և օպտիմալացման գործընթացներին Երևանում և համրապետության մարզերում, ինչպես նաև ուժեղացնել ՀՀ առողջապահության նախարարության ու հիմնական ստորաբաժանումների առողջապահական ոլորտի բաղաբաղականության մշակման և մոնիթորինգի, կարգավորման և վերահսկման հզորությունները:

Ծրագրի երկրորդ փուլի նպատակն է աջակցել առողջապահության ոլորտի բարեփոխման երկրորդ փուլին՝ ավաքտելով անցումը ընտանեկան բժշկության համակարգին, իրականացնելով մարզային հիվանդանոցային համակարգերի արդիականացում և շարունակելով կառավարության ինտիտուցիոնալ կարողությունների ամրապնդումը, միաժամանակ աջակցելով բժշկական կրթության համակարգի բարելավմանը:

Ծրագրի բաղադրիչներն են՝

- Ընտանեկան բժշկության զարգացում
- Հիվանդանոցների վերակազմավորման և բարելավման փորձարարական ծրագիր
- Կառավարության կարողությունների ուժեղացում առողջապահության ոլորտում
- Ծրագրի կառավարում

Ա. Ընտանեկան բժշկության զարգացում

Ծրագրի նպատակներին հասնելու համար բաղադրիչով նախատեսվում է ընտանեկան բժիշկների և բուժբույրերի վերապատրաստման և ուսուցման բարելավում, առաջնային առողջապահության ենթակառուցվածքի ուժեղացում՝ ամբուլատորիաների վերակառուցման և գյուղական կենտրոնների շինարարության միջոցով:

Բ. Հիվանդանոցների վերակազմավորման և բարելավման փորձարարական ծրագիր

Ծրագրի նպատակներին հասնելու համար բաղադրիչով նախատեսվում է միավորված հիվանդանոցների վերակազմում և ժամանակակից բժշկական սարքավորումների տրամադրում, հիվանդանոցային որակի ապահովման և բժշկական քափոնների կառավարման համակարգերի ներդրման համար ուսուցման և տեխնիկական աջակցության տրամադրում:

Գ. Կառավարության կարողությունների ուժեղացում առողջապահության ոլորտում

Ծրագրի նպատակներին հասնելու համար բաղադրիչով նախատեսվում է ազգային առողջապահական քաղաքականության և ռազմավարության մշակման կարողությունների զարգացում, կարգավորիչ, վերահսկիչ և կառավարման գործառույթների ուժեղացում, առողջապահության պետական գործակալությունում պետական ծախսերի կառավարման բարելավում, ազգային ոչ-վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ռազմավարության նախագծման և իրականացման ուժեղացում, բժշկական կրթության համակարգի բարելավում:

Դ. Ծրագրի կառավարում

Նախատեսվում է՝ առողջապահության նախարարության և ԾԻԳ-ի կառավարման կարողությունների ուժեղացում՝ Ծրագրի իրականացումը մոնիտորինգի ենթարկելու և ղեկավարելու համար:

Ընտրանքային կարգով «Հիվանդանոցների վերակազմավորման և բարելավման փորձարարական ծրագիր» բաղադրիչի «Շինարարական աշխատանքներ» կատեգորիայով իրականացրած «Գորիսի բժշկական կենտրոնի» և «Ապարանի բժշկական կենտրոնի» շինարարական վերանորոգման աշխատանքների կատարողական ակտերի փաստաթղթային ուսումնասիրությամբ և «Ապրանքներ» կատեգորիայով «Արարատի ԲԿ» ՓԲԸ-ին սարքավորումների հատկացման գործընթացի ուսումնասիրությամբ պարզվել է, որ

1. «Շինարարական աշխատանքներ» կատեգորիայով

1.1 Կատարողական ակտերով վճարված աշխատանքներում թույլ է տրվել 2,329.0 հազ. դրամի հավելագրում, որից

1.1.1 «Արարիչ» ՍՊԸ-ի կողմից «Գորիսի բժշկական կենտրոնի» ՓԲԸ-ի շենքի վերանորոգման աշխատանքներում 2,059.0 հազ. դրամ (պողպատե խողովակների միջով հաղորդալարերի մոնտաժման աշխատանքների ծավալը նվազեցվել է, սակայն այդ խողովակների մոնտաժման աշխատանքների ծավալը չի նվազեցվել):

1.1.2 «Ռուստիկա Լենդ» ՍՊԸ-ի կողմից «Ապարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շենքի վերանորոգման աշխատանքներում 270.0 հազ. դրամ (խրամուղում 540գծմ մալուխի փոման պարագայում հաշվարկվել է խրամուղում 620գծմ մալուխի ծածկումը աղյուսով):

1.2 «Արարիչ» ՍՊԸ-ի կողմից «Գորիսի բժշկական կենտրոնի» ՓԲԸ-ի շենքի վերանորոգման աշխատանքներում արտաքին պատերի ներկման լրացուցիչ կատարված աշխատանքները պայմանագրում առկա 1քմ-ն 2.0 հազ. դրամ գնով վճարելու փոխարեն վճարվել են 1քմ-ն 7.0 հազ. դրամով, ինչի արդյունքում ավել է վճարվել 10,218.0 հազ. դրամ:

1.3 Աշխատանքների սխալ կազմակերպման արդյունքում թույլ է տրվել 2,268.0 հազ. դրամի անարդյունավետ ծախս, մասնավորապես՝ «Ապարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շենքի վերանորոգման աշխատանքներում պատերի ամբողջ մակերեսով գաջով սվաղի աշխատանքներն ավարտելուց ու վճարելուց հետո, ևս 2100գծմ հաղորդալարերի անցկացման համար վճարվել է նոր սվաղված մակերևույթներում ակոսների բացման և վերականգնման աշխատանքներ 2,268.0 հազ. դրամի:

1.4 «Ապարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շենքի վերանորոգման լրացուցիչ աշխատանքների կատարման համար «Ռուստիկա Լենդ» ՍՊԸ-ի հետ կնքված համաձայնագրերում լրացուցիչ աշխատանքների միավորի գները բարձր են ընդունվել նախագծողի առաջարկած գներից 20,230.0 հազ. դրամի չափով (շինարքի բարձման և տեղափոխման գինը առաջարկվել է 3.6 հազ. դրամ վճարվել է 13.0 հազ. դրամով, տանիքի ծածկույթի կառուցման 1քմ-ի գինը առաջարկվել է 9.42 հազ. դրամ կիրառվել է 1քմ-ն 16.9 հազ. դրամ):

1.5 Լրացուցիչ աշխատանքների համար նախագծողի առաջարկած գները գերազանցում են ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից սահմանված կարգով հաշվարկի դեպքում ստացվող նախահաշվային արժեքը 19,979.0 հազ. դրամով, մասնավորապես՝

1.4.1 «Արարիչ» ՍՊԸ-ի կողմից «Գորիսի բժշկական կենտրոնի» ՓԲԸ շենքի վերանորոգման աշխատանքներում 7,358.0 հազ. դրամ (բետոնի մեխի, այլումինե ճոճվող դռների, ծեփամածկման աշխատանքների և ցուցանակների միավոր գները):

1.4.2 «Ռուստիկա Լենդ» ՍՊԸ-ի կողմից «Ապարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ շենքի վերանորոգման աշխատանքներում 12,621.0 հազ. դրամ (սյտուռահանագողի, շեպերի գաջի սվաղի, ջրի բաքի, 20սմ լայնությամբ լամինատե ժապավենների, տաշտակի սալվածքի նախապատրաստական շերտի միավորի գները և այլն):

1.6 «Արարիչ» ՍՊԸ-ի կողմից «Գորիսի բժշկական կենտրոնի» ՓԲԸ-ի շենքի վերանորոգման աշխատանքներում թանկ աշխատանքները փոխարինվել են էժան աշխատանքներով, սակայն պայմանագրային գինը նվազեցնելու փոխարեն ավելացվել է 636.0 հազ. դրամով (500սմ բարձրությամբ այլումինե ջեռուցման մարտկոցը, որի 1 սեկցիայի գինը սահմանված է եղել 3.0 հազ. դրամ, փոխարինվել է 400սմ բարձրությամբ մարտկոցով, սակայն վճարվել է 1 սեկցիան 4.2 հազ. դրամով և այլն):

1.7 Թվով 12 օբյեկտներում (Տեղի, Վաղաշենի, Աստղածորի, Ուշիի, Արտենիի, Ծովագյուղի, Սրգաշատի, Մեծ Մանթաշի առողջության առաջնային պահպանման կենտրոններ, Բուժականի, Հոռոմի, Արևիկի և Զուչակի ամբուլատորիաներ), լրացուցիչ աշխատանքներ ի հայտ գալու պատճառաբանությամբ կատարվել են աշխատանքների վերջնաժամկետների ոչ համաչափ երկարաձգումներ: Մասնավորապես՝ Հոռոմի բժշկական ամբուլատորիայում աշխատանքների ծավալները ավելացնելով ընդամենը 0.7%-ով ավարտի ժամկետը երկարաձգվել է կրկնակի անգամ՝ սկզբնական նախատեսված 4 ամսին ավելացվել է ևս 4 ամիս:

2. «Ապրանքներ» կատեգորիայով

2009-2011թթ. ընթացքում ՀՀ առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի և 21 կազմակերպությունների միջև կնքվել է թվով 32 պայմանագրեր ապրանքներ /բժշկական սարքեր և սարքավորումներ, ինչպես նաև բժշկական գույք/ մատակարարելու համար:

Վերահսկողության ընթացքում ընտրանքային կարգով կատարված այցելությունների ընթացքում արձանագրվել է, որ «Արարատի ԲԿ» ՓԲԸ-ում, դեռևս 2010թ.-ի սեկտեմբերին ստացված, 495.3 հազ. դրամ արժողությամբ, մանկաբարձական բազկաթոռը չէր օգտագործվում և գտնվում էր պահեստում:

II. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Թոչնագրիային հակազդելու ծրագիր

Ծրագրի նպատակն է Հայաստանում ընտանի թռչունների կողմից բարձր ախտածին թռչնագրիայի (ԲԱԹԳ) վարակի և այլ հիվանդությունների՝ մարդկանց նկատմամբ սպառնալիքների նվազեցումը, նախապատրաստումն ու վերահսկումը: Ծրագրի «Մարդու առողջություն» բաղադրիչի շրջանակներում նախատեսվում է կատարելագործել ՀՀ առողջապահական համակարգի վերահսկողության համակարգը, լաբորատոր ցանցը,

հզորացնել հանրային առողջության արձագանքման հնարավորությունները, հասնել ստանդարտացման և արագ հակազդման բավարար կարողության՝ վերահսկողության միջոցառումների իրականացման և թռչնագրիայի բռնկման հնարավոր դեպքերի վաղ բացահայտման նպատակով:

Ծրագրի բաղադրիչներն են՝

- Առողջապահական համակարգի արձագանքման կարողությունների ուժեղացում
- Հանրային առողջապահության ծրագրի պլանավորում և համակարգման բարելավում
- Համաճարակաբանական հսկողության համակարգի ուժեղացում
- Մարդու առողջություն

Թռչնագրիային հակազդելու ծրագրի «Մարդու առողջության բաղադրիչ»-ի և Առողջապահական համակարգի արդիականացում ծրագրի բոլոր բաղադրիչների «խորհրդատվական ծառայություններ» կատեգորիայի ընտրանքային կարգով իրականացրած վերահսկողությամբ պարզվել է, որ

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում բոլոր օբյեկտներում կատարվել են աշխատանքների սկզբնական նախագծային ծավալների զգալի փոփոխություններ՝ առանձին օբյեկտներում մինչև 35%-ի չափով, ինչը վկայում է բավականին թերի իրականացված նախագծային աշխատանքների (խորհրդատվական ծառայության) մասին: Բացի այդ, նախագծային կազմակերպության (խորհրդատու) կողմից թույլ տրված սխալ նախագծային լուծումների արդյունքում, տեղի է ունեցել աշխատանքների չհիմնավորված թանկացումներ, մասնավորապես՝ «Էլեկտրոննախագիծ» ՓԲԸ-ի կողմից կազմված «Ապարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շենքի վերանորոգման աշխատանքների նախագծում, արտաքին պատերի մաքրումը ավագաշքով նախատեսելու փոխարեն նախատեսվել է իրականացնել հղկաքարով հղկմամբ, ինչի արդյունքում տեղի է ունեցել աշխատանքների թանկացում 13,395.0 հազ. դրամի չափով:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

1. Շինարարական աշխատանքներում թույլ է տրվել 2,329.0 հազ. դրամի հավելագրում:
2. Լրացուցիչ կատարված աշխատանքները վճարվել են պայմանագրում առկա միավոր գնից բարձր գներով՝ 10,218.0 հազ. դրամ:
3. Աշխատանքների սխալ կազմակերպման արդյունքում թույլ է տրվել 2,268.0 հազ. դրամի անարդյունավետ ծախս:
4. Նախագծային կազմակերպության կողմից թույլ տրված սխալ նախագծային լուծումների արդյունքում տեղի է ունեցել աշխատանքների չհիմնավորված թանկացում 13,395.0 հազ. դրամի չափով:

5. Լրացուցիչ աշխատանքների կատարման համար կնքված համաձայնագրերում պայմանագրային գինը բարձր է ընդունվել նախագծողի առաջարկած գնից 20,230.0 հազ. դրամով:

6. Լրացուցիչ աշխատանքների համար նախագծողի առաջարկած գները գերազանցում են ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից սահմանված կարգով հաշվարկի դեպքում ստացվող նախահաշվային արժեքը 19,979.0 հազ. դրամով:

7. Թանկ աշխատանքները փոխարինվել են էժան աշխատանքներով, սակայն պայմանագրային գինը նվազեցնելու փոխարեն ավելացվել է 636.0 հազ. դրամով:

8. Թվով 12 օբյեկտներում աշխատանքների ավարտի ժամկետը երկարացվել է ի հայտ եկած լրացուցիչ աշխատանքների ծավալներից ոչ համաչափ:

9. Աշխատանքների իրականացման ընթացքում բոլոր օբյեկտներում կատարվել են աշխատանքների ծավալների զգալի փոփոխություններ՝ առանձին օբյեկտներում մինչև 35%-ի չափով, ինչը վկայում է բավականին քերի իրականացված նախագծային աշխատանքների մասին:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կատարման խորհրդին և ՄԻԳ-ին՝

1. Վերականգնել շինարարական աշխատանքներում թույլ տրված հավելագրումները և պայմանագրի միավոր գնից բարձր գնով վճարումները:

2. Ձեռնարկել միջոցառումներ՝ արձանագրված խախտումները հետագայում բացառելու նպատակով:

3. Իրականացնել պատշաճ հսկողություն՝ պատվիրված նախագծերի նկատմամբ աշխատանքների չիմնավորված թանկացումները բացառելու նպատակով:

4. Իրականացնել պատշաճ հսկողություն՝ շինարարական աշխատանքների իրականացման պայմանագրերի պահանջների լիարժեք կատարման ուղղությամբ:

Համաձայն «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի գ) կետի, մեկամսյա ժամկետում ՀՀ վերահսկիչ պալատին զրավոր տեղեկատվություն տրամադրել հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
էլ. փոստ minister@moh.am

_____ N _____

Ձեռ N _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ ՊԱՐՈՆ Դ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սարգսյան

Ի կատարումն ՀՀ վարչապետի 22.03.2012թ. №02/23.14/3964-12 և 20.04.2012թ. №01/15/2123-12 հանձնարարականների ու ղեկավարվելով ՀՀ վարչապետի 04.05.2008թ. №225-Ա որոշման 2-րդ կետի պահանջով Ձեզ եմ ներկայացնում ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 07.03.2012թ. թիվ 5/5 որոշմամբ հաստատված «ՀՀ առողջապահության նախարարությանը պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման և պետական սեփականության կառավարման և օգտագործման նկատմամբ վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվության» և թիվ 5/6 որոշմամբ հաստատված «ՀՀ առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից իրականացվող օտարերկրյա պետությունների և միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրված վարկային և դրամաշնորհային ծրագրերի նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվության» ՀՀ առողջապահության նախարարության բացատրությունները:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Հ. ՔՈՒՇԿՅԱՆ

Կատարող՝ Ա. Աթոյան
Ֆինանսատնտեսագիտական
վարչություն հեռ. 564121

ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
Էլ. փոստ minister@moh.am

_____ N _____

Ձեռ N _____

ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 07.03.2012թ. թիվ 5/6 որոշմամբ հաստատված «ՀՀ առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից իրականացվող օտարերկրյա պետությունների և միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրված վարկային և դրամաշնորհային ծրագրերի նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվության»

I. «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Առողջապահական համակարգի արդիականացման ծրագրի»

1. «Շինարարական աշխատանքներ» կատեգորիայով

ա/ հաշվետվության 1.1.1 կետի վերաբերյալ - Սկզբնական ծավալաթերթով նախատեսված է եղել ուղղաձիգ հորաններում, միջանցքների որոշ հատվածներում տարբեր կտրվածքի հաղորդալարերը անցկացնել Փ25մմ հաստությամբ պողպատե ցինկապատ խողովակների միջով - 1430 գմ.: Պողպատե խողովակները տեղադրելուց հետո, որոշվել է հաղորդալարերը անցկացնել Փ100մմ հաստությամբ պլաստմասե սակառների միջով- 320 գմ: Ուստի «հաղորդալարերի անցկացում պողպատե խողովակների միջով» աշխատանքը -5700 գմ պակասեցվել է, իսկ արդեն վճարված պողպատե խողովակների արժեքը՝ ոչ:

բ/ հաշվետվության 1.2 կետի վերաբերյալ - Սկզբնական պայմանագրում առկա 1քմ-ն 2.0 հազ. ՀՀ դրամ կետը **արտաքին պատերի ներկման** աշխատանքի գումարն է: Հետագայում նախատեսվել է արտաքին պատերի ջերմամեկուսացում պոլիպերիստիրոլային 2 սմ հաստությամբ սալերով, որի վրա կատարվել է սվաղ և **գունավոր վերջնամշակում**: Գունավոր վերջնամշակումը իր մեջ ներառում է մի քանի շերտերից բաղկացած աշխատանքների հաջորդականություն, մասնավորապես.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
Էլ. փոստ minister@moh.am

_____ N _____

Ձեռ N _____

1. Ծեփամածիկի հիմքով ջրակայուն նյութ, որը քսվել է նախապատրաստական շերտին կապրոնե ցանցի վրա

2. Գունավոր ցայտաներկում նույն ծեփամածիկի հիմքով և արտաքին գունաներկով պատրաստված խառնուրդով

3. Վերջնական լաքապատում ջրաանթափանց լաքով

Այս աշխատանքների համար կատարվել է մասնագիտական հաշվարկ առաջարկվել է 1քմ աշխատանքի դիմաց վճարել 7.0 հազ. ՀՀ դրամ:

զ/ հաշվետվության 1.3 կետի վերաբերյալ – համաձայն հաշվետվության՝ «Ապարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ շենքի վերանորոգման սխալ կազմակերպված շինարարական աշխատանքների արդյունքում արձանագրվել է 2,268,000 ՀՀ դրամի գումար. նշվածի կապակցությամբ հայտնում ենք, որ պատերի ամբողջ մակերեսով գաջի սվաղը ավարտելուց և վճարելուց հետո 2100 գմ հաղորդալարերի անցկացման համար փորվել և վերականգնվել են ակոսներ, որովհետև տեղի է ունեցել պալատների մահճակալների վերադասավորման նախագծային փոփոխություն, որն էլ առաջացրել է նման անհրաժեշտություն (մահճակալների վերևում տեղադրվել են լուսատուներ, անջատիչներ, վարդակներ):

դ/ հաշվետվության 1.4 կետի վերաբերյալ - «Ապարանի ԲԿ» ՓԲԸ շենքի վերանորոգման ավելացված ծավալներում շինադրի բարձման և տեղափոխման գինը նախագծողի կողմից առաջարկված 3,6 հազ. ՀՀ դրամի փոխարեն կիրառվել է 13,0 հազ. ՀՀ դրամը, իսկ տանիքի ծածկույթի կառուցման 1քմ գինը նախագծողի կողմից առաջարկված 9,42 հազ. ՀՀ դրամի փոխարեն կիրառվել է 16,9 հազ. ՀՀ դրամը, որովհետև կիրառված գները ի սկզբանե նախատեսված են եղել մրցութային փաթեթում ներառված ծավալաթերթով, որն էլ հետագայում կազմել է պայմանագրի անբաժանելի մաս: Հետևաբար, 2 դեպքում էլ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
Էլ. փոստ minister@moh.am

_____ N _____

Ձեր N _____

կիրառվել են պայմանագրի ծավալաթերթով նախատեսված աշխատանքների միավոր գները:

ե/ հաշվետվության 1.5 կետի վերաբերյալ – հաշվետվությունում նշված լրացուցիչ աշխատանքները ի սկզբանե նախատեսված չեն եղել Պայմանագրի ծավալաթերթում: Նոր ավելացված աշխատանքների միավոր գները ներկայացվել են թե՛ Նախագծողի և թե՛ Կապալառուի կողմից և քննարկվել են հիմնարկում: Համաձայն Համաշխարհային Բանկի գնումների ուղեցույցի՝ ՀՀ ԱՆ ԱԾԻԳ ՊՀ-ն պարտավորվածություն չունի նոր ավելացված միավոր աշխատանքի արժեքը սահմանելիս հիմք ընդունել Նախագծողի կողմից արված առաջարկը: Հետևաբար, հիմք ընդունելով շինարարական աշխատանքների պայմանագրերի 40,2 կետը, ինչպես նաև նպատակ ունենալով ապահովել շինարարական աշխատանքների ժամանակին, որակյալ և ամբողջական ավարտը, հիմնարկն ընդունել է Կապալառուի կողմից ներկայացված գները:

զ/ հաշվետվության 1.6 կետի վերաբերյալ - հաշվետվությունում նշված «Գորիսի ԲԿ» ՓԲԸ շենքի վերանորոգման ընթացքում 500մմ բարձրությամբ այլումինե ջեռուցման մարտկոցի միավորի գինը՝ 3,0 հազ ՀՀ դրամ, նախատեսված է եղել ի սկզբանե Պայմանագրով, որը հետագայում փոխարինվել է 400մմ բարձրությամբ այլումինե ջեռուցման մարտկոցներով: Արդյունքում, անհրաժեշտություն է առաջացել նոր աշխատանքի միավոր գին որոշելու: Համաձայն Համաշխարհային Բանկի գնումների ուղեցույցի՝ ՀՀ ԱՆ ԱԾԻԳ ՊՀ-ն պարտավորվածություն չունի նոր ավելացված միավոր աշխատանքի արժեքը սահմանելիս հիմք ընդունել Նախագծողի կողմից արված առաջարկը: Հետևաբար, հիմք ընդունելով շինարարական աշխատանքների պայմանագրերի 40,2 կետը, ինչպես նաև նպատակ ունենալով ապահովել շինարարական աշխատանքների ժամանակին, որակյալ և ամբողջական ավարտը, հիմնարկն ընդունել է «Արարիչ» ՍՊԸ կողմից կողմից ներկայացված գինը:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
Էլ. փոստ minister@moh.am

_____ N _____

Ձեր N _____

Է/ հաշվետվության 1.7 կետի վերաբերյալ – թվով 12 օբյեկտներում շինարարական աշխատանքներ իրականացնող կազմակերպությունների պայմանագրերում կատարվել են աշխատանքների ժամկետների երկարացումներ ոչ միայն ավելացված ծավալների պատճառով, այլ նաև տվյալ տարածքներում շին. աշխատանքներ իրականացնելու համար անբարենպաստ եղանակային պայմաններից ելնելով, ինչն ապացուցված է Հայիիդրոմետից ներկայացված տեղեկանքներով:

ը/ «Ապարանի ԲԿ» ՓԲԸ շենքի վերանորոգման շինարարական աշխատանքներում արտաքին պատերի մաքրումը նախագծով սահմանված ավագաշթով նախատեսելու փոխարեն նախատեսվել է իրականացնել հղկաքարով հղկմամբ, որովհետև գլխավոր ճակատի տուֆի շարվածքի պատերը գտնվում էին քայքայված վիճակում, կարանները ունեին բացվածքներ, որոնք պահանջում էին լցափակում: Ուստի, արտաքին տեսքը բարվոք վիճակի բերելու համար միայն հղկաքարով հղկմամբ և մաքրման եղանակն էր արդյունավետ: Հարկ է նշել նաև, որ նշված խախտումը սխալմամբ ընդգրկվել է «ՀԲ աջակցությամբ իրականացվող «Թոչնագրիպին հակազդելու ծրագիր» բաժնում:

Այսպիսով՝ Հիմք ընդունելով ՀՀ Վերահսկիչ պալատի խորհրդի 07.03.2012թ. թիվ 5/6 որոշմամբ հաստատված «Ընթացիկ հաշվետվության» արդյունքները

- Հաշվետվության 1.1 և 1.2 կետերով արձանագրված և ՀՀ պետական բյուջե վերականգնման ենթակա գումարները՝ **2.329.000ՀՀ դրամ հավելագրման գումար և 10.2018.000ՀՀ դրամ պայմանագրի միավոր գնից բարձր վճարում**, սահմանված ժամկետներում Կապալառու կազմակերպությունների կողմից կփոխանցվեն ՀՀ պետական բյուջեի համապատասխան հաշվին,
- Հիմնարկի կողմից կձեռնարկվեն բոլոր անհրաժեշտ միջոցները՝ արձանագրված խախտումները, ինչպես նաև պատվիրված նախագծերով իրականացված



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
Էլ. փոստ minister@moh.am

_____ N _____

Ձեր N _____

աշխատանքների չհիմնավորված թանկացումները հետագայում բացառելու և շին. աշխատանքների իրականացման պայմանագրերի պահանջների կատարման ուղղությամբ:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 07.03.2012թ. թիվ 5/6 որոշմամբ հաստատված «ՀՀ առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից իրականացվող օտարերկրյա պետությունների և միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրված վարկային և դրամաշնորհային ծրագրերի նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ»

ՀՀ Վերահսկիչ պալատի կողմից 01.01.2009-01.12.2011թթ. ընկած ժամանակահատվածում ՀՀ ԱՆ «ԱԾԻԳ» ՊՀ կողմից իրականացվող «Առողջապահական համակարգի արդիականացում» երկրորդ թիվ 4267-ԱՍ վարկային և «Թռչնագրիպին հակազդելու» դրամաշնորհային ծրագրերի կատարողականների վերլուծության արդյունքում արձանագրված ՀՀ պետական բյուջե վերականգնման ենթակա ընդհանուր գումարը կազմել է 12,547.0 ՀՀ հազ. դրամ:

Նշված գումարից «Ռուստիկա Լենդ» ՍՊ ընկերությունից ՀՀ ԱՆ «ԱԾԻԳ» ՊՀ կողմից պահված շինարարական աշխատանքների երաշխիքային գումարի հաշվին մարվել է արձանագրված վճարման ենթակա 270.0 ՀՀ հազ. դրամ գումարը:

«Արարիչ» ՍՊԸ կողմից վերականգնման ենթակա 12,277.0 ՀՀ հազ. դրամ գումարից աշխատանքով արդեն իսկ վերականգնվել է 6,500.0 ՀՀ հազ. դրամ գումարը, ինչպես նաև 2,000.0 ՀՀ հազ. դրամ գումարը «Արարիչ» ՍՊԸ կողմից վճարվել է ՀՀ պետական բյուջե: Մնացած 3,777.0 ՀՀ հազ. դրամ գումարը «Արարիչ» ՍՊԸ պարտավորվում է վճարել սույն թվականի փետրվար ամսին: